# ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՒՍԱՆՈՑՆԵՐԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՀԵՂԻՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ
heghmk@yahoo.com

Տէրունակոխ սրբավայրերում Հայ Առաքելական Եկեղեցու բազմադարեայ պատմութեան մէջ որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում Հայ Եկեղեցու կուսանոցների հնարաւոր գոյութեան հարցը:

Խնդրի քննութեան համար փորձել ենք ի մի բերել մատենագրական ու պատմագրական աղբիւրներում այդ մասին վկայութիւններ՝ հարցի էութիւնը հնարաւորինս տեսանելի դարձնելու համար:

Յիշատակուած աղբիւրներն առաւել հարուստ են միանձնուհիների կամ, «հաւատաւոր կանանց» մասին հաղորդումներով: Աւելին, նրանց ներկայութիւնը սուրբ վայրերում, իբրեւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամներ, մեզ առաւել ծանօթ «մայրապետ»[1] անուամբ, ձգւում է մինչեւ մեր օրերը:

Հակառակ այս իրողութեան, սուրբ վայրերում Հայ Եկեղեցու կուսանոցների մասին տեղեկութիւնները չափազանց սակաւ են, եթէ ոչ՝ եզակի:

Ըստ Դ.-Ե. դարերի բիւզանդական պատմիչ Սոկրատ Սքոլաստիկոսի՝ Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէ իշխանուհին, գալով Երուսաղէմ, ոչ միայն հիմնում է եկեղեցիներ, այլեւ իր շուրջն է խմբում բազմաթիւ կանանց եւ նրանց ուսուցանում կոյսերին վերաբերող եկեղեցական կանոններ. «*Իսկ մայր թագաւորին արարեալ զՆոր Երուսաղէմն, եւ ի յայրին Բեդղեեմա, ուրանաւր ըստ մարմնոյ ծնունդն Քրիստոսի. միւս այլ շինէր եկեղեցի. եւ ոչ զայս միայն. այլ եւ ի լերինն Համբարձման: Եւ այսպէս ունէր երկիւղածաբար յԱստուծոյ առ այս. որպէս զի աղաւթել նմա հանդերձ բազում կանանց դասու. եւ զկուսանսն վերագրեալս եկեղեցեացն կանոնաւ ի գիտութիւն յորդորելով, ընքեամբ իւրովի գործեալ. զերեկորնական սեղանսն մատուցանելով*»[2]:

Երուսաղէմի պատմութեան հեղինակ Տիգրան Սաւալանեանցը, վկայակոչելով բիւզանդական այս աղբիւրը, Եկեղեցու կողմից սրբացուած բարեպաշտ իշխանուհուն համարում է Երուսաղէմում կանանց մենաստանների հիմնադիր. «*Նաեւ կոյսերու յատուկ մենաստաններ կը հիմնէ, ու անոնց անունները արձանագրելով՝ ամէն մէկուն արքունի գանձէն ռոճիկներ կը սահմանէ: Տեղ տեղ մենակեացներու վանքեր ալ կը կառուցանէ...*»[3]:

Խօսքն այստեղ, սակայն Հայ Եկեղեցու կուսանոցների մասին չէ:

Իր պատմականութեամբ հանդերձ անորոշ է նաեւ Ձիթենեաց Լեռան վրայ գտնուած կուսանոցի հայկական լինելու հարցը:

Հայր Վարդան Հացունու վկայակոչած աղբիւրի համաձայն՝ այդ կուսանոցը Պաղեստինի 137 մենաստանների թւում եղել է միակ հայկականը: Հացունին, սակայն, չհերքելով յիշատակուած կուսանոցի պատմականութիւնը, կասկածի տակ է առնում դրա հայկական լինելը՝ առաւել հաւանական նկատելով վերջինի յունական լինելը: «*Պատմական կրնայ նկատուիլ հայ մենանոցի մը գոյութիւնը՝ բնակուած կուսաներէ Ձիթենեաց լերան վրայ՝ միայն յանուն Աւետեաց. միակն իբր հայ՝ ամբողջ Պաղեստինի 137 ամենազգի խառն մենաստանաց մէջ...*[4]*: Թէեւ յիշեալ կուսաստանի առաջնորդ Մօր յունարէն տապանագիրը՝ Վայլիէի կասկած կու տայ նաեւ կուսանաց յոյն լինելու*»[5]՝ գրում է Հացունին:

Նոյն կուսանոցը յիշատակում է նաեւ Սաւալանեանցը: Սակայն նա եւս չի անդրադառնում կուսանոցի պատկանելութեանը: Է. դարում Երուսաղէմում պարսից զօրքերի կատարած ասպատակութիւնների մասին խօսելիս՝ Սաւալանեանցը, իբրեւ սկզնաղբիւր նշելով *Հարանց Վարքի* մի ձեռագիր, նշուած կուսանոցում կատարուած պղծութիւնների մասին ի մասնաւորի գրում է. «*Այն ժամանակ Ձիթենեաց լերան վրայ կուսանաց վանք մը կար, որ Փարախ կը կոչուէր, ու ինչպէս կը կարծուին, այն մենաստանն էր՝ ուր երբեմն ճգնած էր Սրբուհին Պարասկեւի: Քաղաքին պաշարման օրերը հոն 400 հաւատաւոր կոյսեր կային, որոնք աշխարհէն ձեռք քաշած՝ ճգնողական կեանքի նուիրուած էին: Պարսից զօրքերը երբ կը տեղեկանան, ներս կը մտնեն, ու բոլոր կոյսերը դուրս հանելով՝ մէջերնին կը բաժնեն ու տեսակ տեսակ պղծութիւններու կը մատնեն զանոնք*»[6]:

Որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Երուսաղէմի կուսանոցներում ապրած Կիլիկեան Հայաստանի իշխանուհիների մասին օտար պատմիչների յիշատակումները, որոնք սակայն, կրկին չեն հաստատում Երուսաղէմում Հայ Եկեղեցու կուսանոցների առկայութիւնը, քանի որ խօսքն այս դէպքում կաթոլիկ վանքերի մասին է:

Այսպէս, Սաւալանեանցը, վկայակոչելով եւրոպացի մի շարք պատմիչների, անդրադառնում է Տափնոս[7] անունով հայ իշխանի դստեր՝ Արտայի եւ Խաչակրաց արշաւանքների մասնակից, Եդեսիայի կոմս Բոդուէնի (Բալդուին, ըստ հայ պատմիչների նաեւ՝ Պաղտին) ամուսնութեան պատմութեանը: Ըստ այդմ՝ Բոդուէնը, որ 1100ին դառնում է Երուսաղէմի թագաւոր, չստանալով կնոջ համար խոստացուած հարուստ օժիտը, հեռացնում է նրան արքունիքից՝ արգելափակելով Ս. Աննայի Բենեդիկտուհիների վանքում՝ իբրեւ կրօնաւորուհի[8]:

Սաւալանեանցը, ըստ նոյն աղբիւրների, գրում է, որ Գաբրիէլ անուամբ հայ իշխանի դուստր Մորփիի եւ Եդեսիայի յաջորդ կոմս Բոդուէն Բ.ի ամուսնութիւնից ծնուած չորս դուստրերից կրտսերը՝ Ճիոյա կամ Ճիոյէդ անուամբ, նոյնպէս հրաժարուելով աշխարհիկ կեանքից, «*Սուրբ Աննայի*

*Բենեդիկտուհիներու սքեմը առաւ վրան»*[9]: Շուտով աւագ քոյրը, «*անարժան համարելով թագաւորի աղջկան մը՝ աննշան տոհմէ աբբասուհիի մը հրամանին տակ գտնուիլը, Բեթանիայի մէջ իր շինել տուած Ս. Ղազարի վանքը տարաւ իր քոյրը, որ ժամանակ մը այնտեղ առաքինի մայրապետի մը ձեռքին տակ դաստիարակուելէ յետոյ եղաւ աբբասուհի նոյն մենաստանին»*[10]:

Միակ աղբիւրը, որը վկայում է Հայ Եկեղեցու կուսանոցի մասին՝ Հերապոլսեցի Անաստաս Վարդապետին վերագրուող Երուսաղէմի հայկական վանքերի յայտնի ցուցակն[11] է, որ հանդիպում է ԺԶ.-ԺԷ. դարերի ձեռագրերում:

Անաստաս Վարդապետը, որ մի շարք ուսումնասիրողների կարծիքով, ապրել է Է. դարում[12], գալով Երուսաղէմ, իշխան Համազասպ Կամսարականի պատուէրով ցուցակագրել է աւելի քան 70 հայկական վանք («Վասն Վանորէից, Որ Ի Սուրբ Քաղաքն Յերուսաղէմ»): Համաձայն ցուցակի՝ դրանցից մէկը կանանց մենաստան է. «*Այլ վանք Ամատունեաց, ուր հաւատաւոր կուսանք բնակէին, ի կողմն Սիոնի*»[13]:

Կուսանոցի մասին յաւելեալ տեղեկութիւն է փոխանցում Սաւալանեանցը, նշելով որ, ըստ, ձեռագիր մէկ այլ օրինակի, այնտեղ շուրջ 100 կոյսեր են բնակուել[14]:

Ամատունեաց կոչուած կուսանոցը թւում է իրական: Սակայն պատմագրութիւնը որեւէ այլ տեղեկութիւն չի հաղորդում այդ մասին՝ տեղի տալով միայն տարբեր վարկածների ու ենթադրութիւնների:

Այսպէս, Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունին, ելնելով Ամատունեաց վանքի տեղագրութիւնից («ի կողմն Սիոնի»), որոշակի երկմտութեամբ այն փորձում է նոյնացնել Ս. Հրեշտակապետաց Վանքի հետ՝ անմիջապէս բերելով նաեւ նման վարկածին հակասող փաստարկներ՝ այդպիսով հերքելով իր իսկ ենթադրութիւնը. «*Կայ նաեւ Անաստաս վրդ.ին յիշատակութիւնը որ է հետեւեալը.* Այլ վանք Ամատունեաց, ուր հաւատաւորքն բնակէին ի կողմն Սիոնի. *վասն զի այս վանքին մէջ շատ անգամներ բնակած են հաւատաւոր կիներ, որ են մայրապետք. բայց յիշատակարանները ցոյց կու տան միւս կողմէն թէ վանականներ նոյնպէս բնակած են հոն պարբերաբար: Կը թուի թէ հին դարերուն՝ կոյսեր կը բնակէին այս վանքին մէջ. բայց ԺԴ. դարու մեր ձեռագրական յիշատակարաններէն, ինչպէս նաեւ 1479 եւ 1483ին Դոմինիկեան Ֆելիքս Ֆապրիի Ուղեգրութենէն կ'իմանանք որ վանականներու բնակութիւնը կը շարունակուէր, եւ երկու հարիւր տարի վերջը միայն մայրապետներ կը հաստատուին հոն»*[15]:

Զերծ մնալով Աղաւնունու ենթադրութիւնը հաստատելու մտքից՝ արժէ նշել, որ վերջինի օգտին խօսում է ոչ միայն երկու վանքերի տեղագրական նոյնութիւնը:

Մասնաւորապէս, առնուազն ԺԴ.-ԺԵ. դարերի միքանի ձեռագիր յիշատակարաններ վկայում են Ս. Հրեշտակապետաց Վանքում հաւատաւոր կանանց աւելի վաղ ներկայութեան մասին, քան եզրակացնում է Աղաւնունին:

Այսպէս, ըստ դոմինիկեան միաբանի ուղեգրութիւնների, 1331ին Երուսաղէմի այս վանքում ընդօրինակած *Ճառընտիր*ում Ներսէս Կրակցին խնդրում է յիշել եւ «*ճգնազգեաց միակեցունքս, եւ* զհոգեւոր հաւատվորքս, *եւ զայլ բնակիչքս Սբ. Յակոբայ եւ Սբ. Հրեշտակապետացս, զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս*»[16]:

Նոյն կերպ Երուսաղէմի Ս. Յակոբ եկեղեցում 1419ին ընդօրինակուած *Ճառընտիր*ի յիշատակագիր Մանուէլ Աբեղան խնդրում է յիշել «*այլ եւ առհասարակ միաբանք եւ բնակիչք Սբ. Յակոբա եւ Սբ. Փրկիչն եւ Սբ. Հրեշտակապետացն. թէ որք որ ի կրաւնաւորաց եւ յաշխարհականաց, եւ որ* ի հաւատաւոր կանանց, *թէ միով հացիւ, կամ միով դրամով, կամ սպասաւորել գրագրերոյն*»[17]:

Աւելին, այս նոյն ձեռագրի յիշատակարաններից մէկում հանդիպում է նաեւ «մայրապետ» անուան ամենավաղ արձարձումներից մէկը. «*Այլ եւ ... մայրպետ ... շատ աշխատել է ի սպասաւորութիւն... եւ զՄելքեսէթ աբեղայն եւ զմայրն իւր զապաշխարողն որ յոյժ աշխատութեամբ սպասաւորէր մեզ յեփել ի թափել, հանապազ սպասաւորութիւն մեզ, յիշեսջիք ընդ նմա եւ զՄարեմ ապաշխարողն ...* »[18]:

Առնուազն ԺԴ. դարից ընդհուպ մինչեւ ոչ-վաղ անցեալը Ս. Հրեշտակապետաց Վանքի հովանու ներքոյ բնակուող հաւատաւոր կանանց կամ մայրապետերի գոյութեան մասին վկայութիւններ են հանդիպում եւ յետագայ դարերի պատմիչների աշխատութիւններում, ուղեգրութիւններում:

Նրանց մասին յատկապէս արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում Սիմէոն Լեհացին (ԺԷ. դար): Ըստ Ներսէս Վրդ. Ակինեանի՝ Լեհացին Երուսաղէմում է եղել 1615 Սեպտեմբեր-1616 Ապրիլ շրջանում: Իր ուղեգրութիւններում նա պատմում է հաւատաւոր կանանց բարեպաշտութեան մասին, որոնց աղօթական կեանքն ուղեկցւում է հիմնականում հայոց վանքի համար աշխատելով ու վանականներին սպասաւորելով:

«*Կային եւ ի սուրբ Փրկիչ կանայք եւ այրիք: Եւ ի Հրեշտակապետ հաւատաւոր կանայք եւ պառաւք, որ ցայգ եւ ցերեկ աղօթէին ի պաք եւ ի ճգնութիւնս. եւ չորապաք գոլով աշխատէին, դատէին. ոմանք պաշախ ժողովէին, այլք մանէին վուշ, եւ վարձն վանաց տային: Եւ կէսք քաղէին ձիթոյ պտուղ եւ աղէին. զի Երուսաղէմայ բոլորն սարուձոր զէյթուն է. եւ երբ ուխտաւոր գային, ծախէին նոցա եւ դրամն տային վանաց: Այլք քախնէին կամ զօրայս ժողովէին կամ հնձէին կամ այլ ծառայութիւն առնելով. ամենայնիւ զմարմինս անփոյթ արարեալ՝ միայն զհոգիս եւ*

*զսուրբ Երուսաղէմ հոգային»*[19]՝ գրում է Լեհացին՝ բերելով նաեւ ճգնակեցութեան բացառիկ օրինակներ:

*«Այլ եւ կայր ծեր կին մը Ուղիտայ անուն, որ իր ճգնութենէն եւ բազում ծնրադրութենէն կզացեալ էր. եւ ասին թէ այս քառսուն ամ է, որ բազում ինչս բերեալ եւ ի վանս եւ ինքն մնացեալ ճգնի աստ ի մանկութենէ, աշխատի եւ ձեռաց վաստակէն դեռ տայ պատարագի եւ ժամուց: Եւ ասաց Պարոնտէրն թէ Ես յորժամ վանացս կերակուր առաքեմ սմա, ոչ ուտէ, ասելով թէ Ես պիտի վանից տամ, թող թէ ուտեմ: Վասն սորայ ասին թէ կոյս է, այլ եւ խստակրօն, զի շաբաթն մի անգամ ճաշակէ, այլ եւ այն՝ չափով եւ կշռով: ...Կին մի այլ կայր, որ ուխտ էր եդեալ՝ վանացն դուրս չելնել եւ բնաւ չերդնուլ: Եւ այլ ոմն, զի ընդ անհաւատսն չխօսէր եւ պտուղ բնաւ չուտէր: Եւ այլ բազում վարս տեսաք եւ մաքուր լուաք մաքուր ծառայից Աստուծոյ՝ արանց եւ կանանց. որ զցայգ եւ զցորեկ ժամաց եւ աղօթից չի դադարէին, զԱստուած միշտ օրհնէին, աշխարհի խաղաղութիւն հայցէին եւ Հայոց մեղաց թողութիւն»*[20]:

Յայտնի է, որ Ս. Հրեշտակապետաց Վանքը շարունակում է մնալ հաւատաւոր կանանց բնակատեղի նաեւ յետագայ ժամանակներում[21]:

Եւ, թերեւս, սա է պատճառը, որ Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան ներկայ անդամներից Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանն իր Vardapet բլոգում գրում է, թէ *«Ս. Հրեշտակապետաց Վանքը եղած է Կուսանոց, ուր մինչեւ XX դարու վերջերը ունեցած է մայրապետ բնակիչներ»*[22]:

Սակայն, պէտք է հաւաստել, որ թէ՛ վերը բերուած յիշատակարանները, թէ՛ պատմագրութիւնը որեւէ կերպ չեն հաստատում Ս. Հրեշտակապետաց Վանքի կուսանոց լինելու ենթադրութիւնը:

Աւելին՝ ԺԸ. դարում վանականութեան հարցերին նուիրուած իտալական մի հրատարակութիւն[23], խօսելով վանքերից դուրս բնակուող հայ միանձնուհիների մասին, իբրեւ օրինակ է բերում Երուսաղէմի միանձնուհիներին՝ ի մասնաւորի նշելով. *«Այս միանձնուհիներէն շատեր վանքերու մէջ չեն բնակիր, ինչպէս անոնք որ Երուսաղէմի մէջ են եւ որոնք կ'ապրին աշխատելով եւ հայ ուխտաւորներու կողմէ տրուած ողորմութիւններով»*[24]:

Այսինքն՝ հաւատաւոր կանանց կամ մայրապետերի համար Ս. Հրեշտակապետաց Վանքը Երուսաղէմի հայոց պատրիարքութեան կողմից յատկացուած բնակատեղի էր միայն եւ ոչ՝ կուսանոց: Մայրապետերը, որ Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կանոնադրութեամբ համարում էին նաեւ միաբանութեան անդամներ, իրենց ծառայութեամբ համահաւասար էին քրծազգեաց եղբայրներին: Իսկ նրանց հիմնական աշխատանքը միաբանութեան անդամների կենցաղային կարիքները հոգալն էր:

Վերադառնալով Անաստաս Վարդապետի թղթին՝ այն Ամատունեաց Վանքից զատ պարունակում է ուշագրաւ այլ հաղորդումներ եւս, որոնք

ենթադրել են տալիս Երուսաղէմում (թէեւ անանուն ու անհասցէ) հայկական այլ կուսանոցների առկայութեան մասին:

Այսպէս, ձեռագրում նշւում է, թէ աւելի ուշ, երբ հայերն ենթարկուել են քաղկեդոնական հալածանքների, յոյներին են անցել շատ վանքեր, թէ՛ արանց եւ թէ՛ կանանց. «*Թափեցին յիշխանութենէ հայրապետացն [յունաց] զամենայն վանորայս Հայոց, եթէ արանց վանք, եթէ կանանց վանք, եւ եթէ խրճիթք միանձանց, անդէն զինքեանս առնելով իշխեցողս*»[25]:

Մէկ այլ հաղորդման համաձայն՝ հայ վանականները, արդէն արաբական տիրապետութեան շրջանում, Երուսաղէմի պարսպին կից վանքերը բնակեցրել են կանանցով ու սարկաւագուհիներով, քանի որ նման տեղակայութեամբ կանանց վանքերը [նոյնն է թէ՝ կուսանոցները], ազատուած էին հարկապահանջութիւնից. «*Դարձեալ եւ էր զի ինքեանք իսկ վանականքն Հայոց թողեալ զիւրեանց վանսն կամաւ ի բաց գնային յաղագս ծանրութեական տաճկական հարկացն. եւ էր զի ի վանս իւրեանց զկանայս եւ զսարկաւագուհիս բնակեցուցանէին, որք էին ընդ պարսպօք, զի ինքեանք ազատ լիցին ի հարկապահանջութեանց, իբրեւ զվանս հաւատաւոր կանանց*»[26]:

Բոլոր այս հաղորդումներն, անշուշտ, խօսում են Երուսաղէմում Հայ Եկեղեցու կուսանոցների հնարաւոր գոյութեան օգտին՝ ենթադրել տալով, որ սուրբ վայրերում Ամատունեաց Վանքից զատ գործել են նաեւ Հայ Եկեղեցու այլ կուսանոցներ, որոնք եկեղեցական բաժանումից յետոյ քաղկեդոնական հալածանքների պատճառով աստիճանաբար դատարկուել են՝ հասնելով ընդհուպ արաբական տիրապետութեան ժամանակներ՝ առնուազն մինչեւ Է. դար:

Սակայն պատմագիտութիւնը խիստ վերապահօրէն է մօտենում Անաստաս Վարդապետի ցուցակի իսկութեանը, ինչը հարցականի տակ է դնում նաեւ Երուսաղէմում Հայ Եկեղեցու կանանց վանքերի գոյութիւնը:

Մասնաւորապէս, Անաստաս Վարդապետի այս հաղորդումներին առաւել քան թերահաւատ է մօտենում Հացունին. «*Այսպէս յանուն Անաստաս վարդապետի նորահնար կամ խաթարուած ռամկալեզու գրութիւն մը, լի ազգայնամոլ մեծաբանութեամբ ու երեւակայութեամբ, Երուսաղէմի մէջ Տրդատայ՝ Լուսաւորչի եւ անոնց ժամանակակից հայ իշխանաց կողմէն կառուցուած կը նշանակէ յանուանէ եօթանասուն մենաստան, «եթէ արանց վանք, եթէ կանանց վանք, եթէ միանձանց խրճիթ». եւ կուսանոցաց մէջ յատկապէս կը յիշէ Ամատունեացը Սիոնի մօտ՝ «ուր հաւատաւորքն բնակէին»: Եւ թէ յետոյ Հայք զանազան պատճառներով կորուսին անոնց մէկ մասը: Իսկ տաճկական տիրապետութեան շրջանին՝ հայ կրօնաւորք պարսպին քով դեռ իրենց ձեռք մնացածները «կանանց վանքեր արարին եւ սարկաւագուհիս կարգեցին, զի անհարկ լիցին եւ*

*ազատ որպէս եւ զայլ կանանց վաներն»: Բայց ուստի՞ ժողովեցին այդքան պատրաստ հայ հաւատաւոր-ներ եւ լեցուցին վանքերդ»*[27]:

Որքանո՞վ է միանշանակ Հացունու այս ժխտողականութիւնը՝ դժուար է ասել: Սակայն արժէ յիշատակել նաեւ Անաստաս Վարդապետին վերագրուող Երուսաղէմի աղուանական վանքերի ցուցակը, որ հանդիպում է Կաղանկատուացու *Պատմութիւն Աղուանից Աշխարհի* գործում՝ «Անուանք Վանորայիցն, Որք յԵրուսաղէմ են Շինեալ յԱղուանից Անուն, Զոր Ի Թըղթոյ Երանելւոյն Անաստասայ Առ Վահան Մամիկոնեան Առեալ Ուսաք»[28]:

Ցուցակում ընդգրկուած վանքերից ուշագրաւ են երկուսը՝ Պարտաւի Ս. Աստուածածինը եւ Ամարասի Ս. Գրիգորը. «*Պարտաւայ վանք Սուրբ Աստուածածինն, որ առ աշտարակին Դաւթի, այժմ ունի*[29] *կին ոմն Մարիամ անուն Շամքորեցի, եւ զկէսն տաճիկ ունի» եւ «Ամարասայ վանք Սուրբ Գրիգոր, այժմ ունի կին մի Գրիգորի անուն, եւ զկէսն տաճիկ ունի»*[30]:

Ակնյայտ է, որ դրանք կիսովի տնօրինել են կանայք տաճիկների հետ միասին: Առաւել ուշագրաւ է այն, որ վանքերից առնուազն մէկը՝ Պարտաւի Վանքը («առ աշտարակին Դաւթի»), գտնուել է Երուսաղէմի մուտքի մօտ: Կարելի՞ է ենթադրել, որ գոնէ այս վանքը, նախկինում լինելով արական, յայտնուել է կանանց եւ արաբների տնօրինութեան տակ հարկապահանջութիւնից խուսափելու հետեւանքով: Թերեւս:

Այսպէս թէ այնպէս, կարող ենք արձանագրել, որ սուրբ վայրերում Հայ Եկեղեցու կուսանոցների մասին միակ աղբիւրը Անաստաս Վարդապետի թուղթն է, որի վաւերականութեան մասին պնդումներն[31] անգամ, նոր լոյս չեն սփռում այս մասին, իսկ հարցի վերջնական պատասխանը շարունակում է պարուրուած մնալ դեռեւս մեզ անյայտ պատմութեան էջերով:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Հայկազեան Բառարանը* «մայրպետ» բառին հետեւեալ բացատրութիւնն է տալիս. «*Մայրապետ. պետմայր, եւ պետ մարց, այսինքն հաւատաւոր կանանց. մայր վանից կուսանաց, աբբասուհի*»: Ժամանակակից հայերէնի բառարաններում «մայրապետ»ը նաեւ որբանոցներում երեխաներին եւ հիւանդանոցներում հիւանդներին խնամող կինն է: Երուսաղէմում մայրապետերը սոսկ վանականներին սպասաւորող հաւատաւոր տնտեսուհիներ են (*Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հ. 2*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1981, էջ 202. նաեւ՝ *Ժամանակակից Հայոց Լեզուի Բացատրական Բառարան, Հտր. 3*, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատ., 1969, էջ 472):

[2] *Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն, Հտր. Ա.*, աշխատասիրութեամբ Մեսրոպ Վ. Տէր Մովսէսեան, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1897, էջ 49-50:

[3] Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, *Պատմութիւն Երուսաղէմի*, գրաբարից աշխարհաբարի փոխադրութիւնը՝ Մեսրոպ Եպս. Նշանեանի, Երուսաղէմ, 2000, էջ 212:

[4] Նման հեղինակ մեզ անյայտ է: Հաւանաբար Հացունին նկատի ունի ֆրանսիացի լուսանկարիչ Լուի դէ Քլերքին (Louis de Clercq): Յայտնի է, որ նա 1859ին ֆրանսիացի հնագէտների հետ մասնակցել է Սիրիա եւ Փոքր Ասիա կատարած գիտարշաւների եւ իր լուսանկարներն ամփոփել *Voyage en Orient* ընդհանուր խորագիրը կրող 6 հատորանոց ալբոմում:

[5] Վ. Հացունի, «Կուսաստանք Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, 1923, Մարտ, էջ 77:

[6] Սաւալանեանց, էջ 251: Այս մասին կայ նաեւ ժողովրդական մի աւանդութիւն, թէ ինչպէս կոյսերից մէկը պղծութիւնից խուսափելու համար մոլորեցնում է երիտասարդ պարսիկ զինուորին եւ ընդունում նահատակութեան պսակը (irates.am/hy/1401436260, 30.05.2014):

[7] Սաւալանեանցը, ոչ-հայեցի նկատելով Տափնոս անունը, հաւանական է համարում, որ Տափնոսը նոյնինքը Կոնստանդինն է, որին օտար պատմիչներն այլ անունով են կոչել: Ըստ Կ. Բասմաջեանի՝ յիշատակուած անձը Ռուբէն Ա. Իշխանի որդի եւ պարոն Կոնստանդինի եղբայր Թորոսն է. «...*Թորոս այս օրինակին հետեւելով՝ իր Արտա անուն աղջիկը կարգեց Երուսաղէմի ապագայ թագաւոր Պաղտինի (Baudouin de Boulogne) հետ, որ խաչակիրներու բանակին առաջնորդ Կոնդոփրէի (Godefroy de Bouillon) եղբայրն էր*»: Լեւոն Տէր Պետրոսեանը համոզիչ է համարում Ժերար Տետէեանի ասորական աղբիւրների վրայ հիմնուած ապացոյցը, ըստ որի լատին աղբիւրներում նշուած Taphnouz, Tafroc կամ Tatos անունով իշխանը Կոնստանդին Կարկառացի իշխանի եղբայր Դաւթուկն է (Կ. Յ. Բասմաջեան, *Լեւոն Ե Լուսինեան. Վերջին Թագաւոր Հայոց*, 1908, Պարիս, Տպ. Տ. Տողրամաճեան, էջ 11. նաեւ՝ Սաւալանեանց, էջ 1194 (տողատակում). նաեւ՝ Լեւոն Տէր Պետրոսեան, *Խաչակիրները եւ Հայերը, Հտր. Ա.*, Երեւան, Նախագահ Տէր Պետրոսեանի արխիւի եւ գրադարանի հիմնադրամ, 2005, էջ 39):

[8] Սաւալանեանց, էջ 320, 1193-6: Հմմտ՝ Claude Mutafian, "Les Princesses Arméniennes et le Liban Latin (XIIe-XIIIe siècle)," *Լիբանանի Հայերը. Անցեալի Իշխանուհիներ Ու Գաղթականներ եւ Ժամանակակից Համայնք Գիտաժողովի Նիւթեր*, Պէյրութ, 2009, էջ 4-6: Հայ իշխանուհիների հետ Երուսաղէմի արքաների ամուսնութեան մասին տե՛ս նաեւ՝ Ղեւոնդ Ալիշան, *Սիսուան*, 1885, Վենետիկ. նաեւ՝ Տէր Պետրոսեան, *Հտր. Ա.*, էջ 39, 152-3, 220, 229, 374-5:

[9] Սաւալանեանց, էջ 1196:

[10] Անդ:

[11] Ցուցակին առաջին անգամ անդրադարձել է Հ. Ղ. Ինճիճեանը, ապա՝ Ալիշանը: Աւետիս Սանճեանը կազմել է ձեռագրի համեմատական բնագիրը՝ Sanjian Avedis K., "Anastas Vardapet's List of Armenian Monasteries in Seventh-Century Jerusalem: A Critical Examination", *Le Muséon*, 1969:82: Հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց, Ե. Հատոր*, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1275-9:

[12] Պաւէլ Չոբանեանը թուագրում է Զ. դարի 70ականներ (Պաւէլ Չոբանեան, «Անաստաս Վարդապետի Կազմած Երուսաղէմի Հայկական Վանքերի Ցուցակի Ժամանակի Հարցի Շուրջ», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2001, թիւ 1, էջ 27-46:

[13] Sanjian, էջ 270. հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց*, էջ 1276:
[14] Սաւալանեանց, էջ 244, տողատակ:
[15] Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի, *Հայկական Հին Վանքեր եւ Եկեղեցիներ Սուրբ Երկրին Մէջ, Ուսումնասիրութիւններ*, 1931, Երուսաղէմ, էջ 110:
[16] Անդ, էջ 100:
[17] *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարեան, *Հտր. 1*, Երուսաղէմ, 1966, էջ 40:
[18] Անդ, էջ 40:
[19] *Սիմէոն Դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն. Տարեգրութիւն եւ Յիշատակարանք*, ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, Ազգային մատենադարան ՃԽԱ., 1936, էջ 303-304:
[20] Անդ, էջ 304-305:
[21] *Գիրք Պատմութեան Սբ եւ Մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս, եւ Սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի*, Կ.Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի, 1731, էջ 270. նաեւ՝ Մկրտիչ Վարդապետ Արծրունեան, *Ստորագրութիւն Սրբոյ Քաղաքին Երուսաղէմի Քննութեամբ Համառօտեալ Ի Հաննա եւ Մարինոս Պատմագրաց Ընդ Որս եւ Յաւելեալ Բազում Բանս Հանդերձ Կարեւոր Ծանօթագրութեամբք*, Յերուսաղէմ, 1859, էջ 182. նաեւ՝ Խորէն Վ. Վանեցի Մխիթարեան, *Համառօտ Պատմութիւն Երուսաղէմի եւ Ստորագրութիւն Սրբազան Տեղեաց*, Երուսաղէմ, 1867, էջ 94:
[22] «Սուրբ Հրեշտակապետաց Վանք», http://ghevondvardapet.com/multimedia-archive/ :
[23] Աշխատութեան Հայ Եկեղեցու վանական կեանքին վերաբերող հատուածները թարգմանաբար հրապարակել է Մխիթարեան միաբան Տաճատ Եարտըմեանը: Ըստ նրա՝ բնագիրն հաւանաբար եղել է ֆրանսերէն: Ինքը՝ Եարտըմեանը, հայ վանականութեան մասին նիւթերը քաղել է երկի իտալերէն թարգմանութիւնից՝ *Storia degli Ordini Monastici Religiosi e Militari e delle Congregazioni Secolari* (Պատմութիւն միանձնական կարգերու, կրօնական եւ զինուորական, եւ աշխարհական միաբանութիւններու): Այն տպուել է 1737ին Իտալիայի Լուկա (Lucca) քաղաքում: 8 հատորանոց գրքի առաջին հատորի հինգերորդ գլուխը հայ վանականների մասին է (Հայր Տաճատ Եարտըմեան, *Նիւթեր Հայ Վանականութեան Պատմութեան (ԺԴ-ԺԷ դար)*, Վենետիկ-Ս. Ղազար, Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», թիւ 30, 1989:
[24] Անդ, էջ 26:
[25] Sanjian, էջ 272-3. հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց*, էջ 1277:
[26] Sanjian, էջ 273, հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց*, էջ 1278:
[27] Վ. Հացունի, «Կուսաստանք Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, 1923, Մարտ, էջ 76:
[28] Պօղոս Խաչատրեանի ենթադրութեամբ Անաստաս Վարդապետին վերագրուող այս ցուցակն առանձին մի ցուցակ է, որ կազմուել է Վահան Մամիկոնեանի խնդրանքով: Չոբանեանի պնդմամբ՝ Կաղանկատուացին օգտուել է ցուցակի առաւել անխաթար օրինակից՝ առանձնացնելով միայն աղուանական վանքերը (Պօղոս Խաչատրեան, *Հայ Հին Գրականութեան Մատենագիտութիւն*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2016, էջ 37. նաեւ՝ Չոբանեան, էջ 27-8):

[29] Ըստ *Հայկազեան Բառարանի*՝ «ունիմ» բայն ունի միքանի նշանակութիւններ, այդ թւում՝ «առնուլ», «տիրել», «առնել», «տէր ըլլալ» (*Նոր Բառգիրք*, էջ 550):

[30] Մովսէս Կաղանկատուացի, «Պատմութիւն Աղուանից Աշխարհի», *Մատենագիրք Հայոց, ԺԵ. Հատոր, Գիրք Բ*, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 356-7: Վարագ Առաքելեանի՝ բնագրի արեւելահայերէն թարգմանութեամբ՝ «*Պարտաւի Սուրբ Աստուածածինը, որ Դաւթի աշտարակի մօտ է, այժմ մի շամքորեցի Մարիամ անունով կին է կառավարում, իսկ կէսին տիրում է արաբ*» եւ «*Ամարասի Սուրբ Գրիգորի վանքին այժմ տիրում է Գրիգորի անունով մի կին. իսկ կէսը պատկանում է արաբի*» (Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից Աշխարհի*, թարգմ., առաջ. եւ ծանօթ.՝ Վարագ Առաքելեան, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1969, էջ 222:

[31] Չորանեան, էջ 27-45:

## THE LIKELIHOOD OF FEMALE ARMENIAN CHURCH CONVENTS IN THE HOLY LAND
**(Summary)**

**HEGHINE MKRTCHYAN**
heghmk@yahoo.com

The paper examines the data on the existence of female Armenian Church convents in the Holy Land.

Such data are very scarce. The earliest and perhaps the most valuable source is the list concerning the Armenian monasteries of Jerusalem prepared by the 7th century priest Anastas. This list is found in a manuscript dating back to the 16th-17th centuries.

After examining all available and indirect data and sources, the author concludes that the existing information cannot confirm (or negate) the presence of female Armenian convents in the Holy Land and that further evidence is needed to clarify this unresolved issue.